հարկս յաշխարհի: Նա ՚ի սաստկանալ պատերազմին, որ շրջակայ իւրն կային, չքաւորեցաւ և զամենայն որ ինչ զաւ ՚ի տանն՝ անօթք, նաև ՚ի վերայ թագահւոյն, ծախեաց և զորայց ոսկիկ եւ. և յետ յաղթութեանց ոչ բնաւ սատացաւ զայն. վասնորոյ կոչեցաւ Ողորմած: Սա Մ՚արկոս բարի գոլով՝ դրդեալ բանադատութեամբ յեւրոցն՝ յարեց զերրորդ հալածումն քրիստոնէից. որև մարտիրոսացաւ սուրբն Պօղիկարպոս և այլ բազում վկայք: Սա մեռաւ ՚ի յՍէնկարեայ, և բերեալ ՚ի Հռոմ թաղեցաւ:

Գոմետոս Եվղեղիանոս՝ որ է Օրեգեանոս, սկսաւ յամի Տեառն ՃՁԳ. ինքնակալեաց ամս ԺԳ. և էր բղջախոհ: Սա մեռաւ և թաղեցաւ յապարանս իւր ՚ի Հռոմ. քանզի զեղ մահու արբուցին նմա, և գտին զնա մեռեալ:

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան